



76. ԻՐԵՔ ԽՐԱՏ

Մարդ մե ճամպա կէրթեր, ոաստ գիկա լծքվորի մե: էդ լծքվոր ղեղներ հմալ էր լծի, օր մեկ դըխ հուաուա կը քաշեր, մեկել՝ դըխ հարաֆ կէրթեր:

— Մա՛րդ,— կըսե ճամպորդ,— էդ հմալ օր լծեր իս ղեղներ՝ վար ու լուծք կէղնի՞: Միտքդ ի՞նչ է:

— Գնա՛,— կըսե,— օր դառձար, քըզի կըսիմ:

Կէրթա, կէրթա՝ ոաստ գիկա մարդու մե, օր աման մե սիսեռ առեր՝ կը ցփներ պատնուվի, կը դառներ սվաղեր, ծեփ կէներ:

— Մա՛րդ, ըսկի սիսեռ պատնուվի կը կանի՞, սիսուով ծեփ կէղնի՞: Միտքդ ի՞նչ է:

— Գնա՛,— կըսե,— օր էն դիեն դառձար էկար, քըզի կըսիմ: Սորա ոաստ գիկա մարդու մե, օր նստեր իրեք տեղով հող կը կուլոներ:

— Ի՞նչ են էդ իրեք կուլոներ: Միտքդ ի՞նչ է:

— Գնա՛,— կըսե,— օր դառձար էկար, քըզի կըսիմ:

Մարդ կէրթա գուր գործ կը տեսնա, կը դառնա ետ:

Հող կուլոնող կըսե.

— Մեկ կուլոն հող կը լցիմ չըսօրվա մեռելի գլխուն, մեկ՝ վաղվա մեռելի գլխուն, էն մեկ լե՝ կնկաց խաբվողի գլխուն, չըմքի կնկա խաբուկ լե մեռելի հեսար է:

Սիսուով ծեփ էնող կըսե.

— Գուզիմ, օր մարդիկ հասկընան, իմալ օր սիսեռ պատնուվի թալիս՝ չը կանի, էն հմալ լե խրատ անգետ մարդու գլուխ չը մտնա:

Լծքվոր լե կըսե.

— Իմ լուծք կը մընի անմիաբան տան, օր հալու շը հասնի,
շըմբի մեկի շինած մեկել կը քանդե:

— Հա՛, վո՛ւա, իդա իրեք խրատ չըմեն մարդոց պետք է, թըղ
գինդ էնին, կախին ուրանց անկըչեն,— կըսե ճամպորդ, կէրթա ուր
սողուն:

